



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**«ԱՆԺԵԼԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 110-ՐԴ ՀՈԴ-
ՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Անժելա Հարությունյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Անժելա Հարությունյանի դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2020 թվականի նոյեմբերի 30-ին:

Դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է.

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասը, այնքանով, որքանով պատասխանողի սնանկ ճանաչվելու պայմաններում գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրել է հայցվորի վրա, ճանաչել Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

2. Դիմողի կարծիքով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածը, սահմանելով գործի վարույթը կարճելու դեպքում պետական տուրքի

հարցը լուծելու կանոնը, հաշվի չի առել այն դեպքը, երբ գործի վարույթը կարճվում է պատասխանողին սնանկ ճանաչելու հիմքով: Դիմողը գտնում է, որ դա հակասում է Սահմանադրության 61-րդ հոդվածին:

Ըստ դիմողի՝ հնարավոր է, որ օրենսդիրն այդ հարցը կարգավորել է՝ այդ դեպքի համար բացառություն չսահմանելու միջոցով: Դիմողը գտնում է, որ այս իրավիճակը ևս հակասում է Սահմանադրության 61-րդ հոդվածով՝ անձի համար երաշխավորված իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքին, որը հանգեցրել է հայցվորի՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցից օգտվելու հիմնարար և սահմանադրական իրավունքի չկիրառմանը:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքներից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրական դատարանում դատական պաշտպանության իրավունքն անձն իրականացնում է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված կարգով: Ի թիվս այլ պայմանների՝ վերը նշված օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց՝ վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետ, որի ընթացքում անձը կարող է դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի, որը նախատեսում է Սահմանադրական դատարանում գործի քննությունը մերժելու հիմքերը, 6-րդ մասի համաձայն՝ նման որոշում է կայացվում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում: Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն «Սահմանադրական դատա-

րանի մասին» սահմանադրական սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, կամ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները, կամ լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը:

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ գործով վերջնական դատական ակտը՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը, կայացվել է 2020թ. ապրիլի 29-ին: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը»: Տվյալ դեպքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողի վերաբերյալ գործով վերջնական դատական ակտը կայացվել է 2020թ. ապրիլի 29-ին, Սահմանադրական դատարան դիմելու համար «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետի ընթացքը սկսվում է հաջորդ օրվանից՝ 2020թ. ապրիլի 30-ից: Նման պայմաններում անձի՝ Սահմանադրական դատարան դիմելու ժամկետը լրացել է 2020թ. հոկտեմբերի 30-ին: Մինչդեռ Անժելա Հարությունյանի դիմումը փոստային ծառայությանն է հանձնվել 2020թ. նոյեմբերի 27-ին: Հետևաբար՝ դիմողը բաց է թողել Սահմանադրական դատարան դիմելու համար սահմանված վեցամսյա ժամկետը, ինչը հիմք է անհատական դիմումով գործի քննությունը մերժելու համար:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Անժելա Հարությունյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմա-

նադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

15 հունվարի 2021 թվականի
ՍԴԱՈ-6